ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N02

29 մարտի 2024 թվական

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան *համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին ավագանու թվով 12 անդամներ:*

Նիստը վարում էր Բաղրամյան համայնքի ղեկավար՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի փոխարինող՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65–րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 2024թվականի մարտի 29-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 28-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 2024 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 29-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 183-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1 -ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի, 37-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 30-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ստեղծել համայնքային արխիվ և ապահովել համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 31-Ա)

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով և 84-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը» համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 32-Ա)

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 150-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Մուրադ Վանիկի Բաղդասարյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մուրադ Վանիկի Մուրադյանին սեփականության իրևավունքով պատկանող հիմք/անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 04022019-04-0032 վկայական 4 փետրվարի 2019թվականի /04-089-0015-0008 կադաստրային ծածկագրով 0,1815 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրից 0,0225 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքը փոփոխել , որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի, որը ներառված է <<Արմավիր-1 >> միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում:

2. Մուրադ Վանիկի Մուրադյանը համայնքի բյուջե պետք է վճարի հողամասի կադաստր ային արժեքների փոփոխման պահին առկա տարբերությունը, որը կազմում է 74300 ՀՀ դրամ , վճարման ժամկետ սահմանել որոշումը ընդունման պահից 30 օրվա ընթացքում:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցման ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվա ռման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 33-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 -Ի N 143-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին >>Հայաստանի

Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1 . Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի <<2024թվականի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> N 143-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N-1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 34-Ա)

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. <u>ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ</u>

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման 38-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով <<Վանանդի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենի 27. 02. 2024թ. N 37 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սեփական անություն հանդիսացող Վանանդ գյուղում գտնվող՝ 04-089-0003-0019 կադաստրային ծածկագրով 0,18086 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքը, 04-089-0003-0016 կադաստրային ծածկագրով 0,35934հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքը, 04-089-0003-0021 կադաստրային ծածկագրով 0,3245հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքները /այսուհետ գույք/,որոնք չեն ընդգրկված հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում, անհատույց օգտագործման իրավունքով

տրամադրել Հայաստանի Հանրապետությանը, ՀՀ կառավարության 2023թվականի նոյեմբերի 30-ին N2093-Ն որոշման շրջանակներում Վանանդ բնակավայրում դպրոց կառուցելու նպատակով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (12)Դեմ (0)Ձեռնպահ (0)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 35-Ա)

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ
3. ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ
4. ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
6. ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
10. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՈՒԹ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ
12. ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ